Դրամաշնորհային աջակցություն «Մարդկային անվտանգության ծրագրերի» համար ՖՏ 2024. «Տաշիր համայնքի ջրամատակարարման ենթակառուցվածքների վերականգնման և բարելավման ծրագրի ստորագրման արարողություն»

Երևան՝ 1 հոկտեմբերի, 2024թ

2024 թվականի հոկտեմբերի 1-ին Տաշիր համայնքում տեղի ունեցավ ջրամատակարարման ենթակառուցվածքների վերականգնման և բարելավման ծրագրի դրամաշնորհային պայմանագրի ստորագրման արարողությունը (Մինչև 72,844 ԱՄՆ դոլար):

Դրամաշնորհի պայմանագիրը կնքվել է Հայաստանում Ճապոնիայի դեսպան պարոն ԱՕԿԻ Յուտակայի և եւ Տաշիրի համայնքապետի տեղակալ պարոն Նորայր Բաղդասարյանի միջև: Արարողությանը ներկա էին նաև տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներ և ծրագրի շահագրգիռ կողմերը:

Այս ծրագրի նպատակն է բարելավել Լոռու մարզի Տաշիր համայնքի ջրամատակարարման ենթակառուցվածքը՝ վերականգնելով և բարելավելով ջրատարի 15 կմ հատվածը: Ծրագրի արդյունքում Տաշիր համայնքի 11 գյուղերի մոտ 12300 բնակիչներ, այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղից տեղահանված մոտ 700 բնակիչներ կունենան խմելու ջրի կայուն և շարունակական հասանելիություն: Սա զգալիորեն կբարելավի տեղի բնակիչների կյանքի որակը և կնվազեցնի տեղահանվածների տնտեսական բեռը:

Դեսպան Առկին և Տաշիր Համայնքի ղեկավարի տեղակալը

Դեսպան Առկին և Համայնքի ղեկավարի տեղակալը ստորագրեցին դրամաշնորհի պայմանագիրը

Դեսպան Առկին շնորհավորանքի խոսքեր ուղղեց ծրագրում ներգրաված կողմերին

Դեսպան Առկիին ներկայացվեցին ավանդական արվեստների օրինակներ